Հաճախակի Տրվող Հարցեր

COVID-19- ի ընթացքում պատվաստումները խիստ կարևոր են ձեր երեխայի առողջության համար

1. Արդյո՞ք իմ երեխան պետք է պատվաստումներ ստանա, երբ Լոս Անջելես շրջանում COVID-19 դեպքեր կան:

   - Այո, պատվաստումները և երեխայի առողջության ստուգման կանոնավոր այցելությունները անհրաժեշտ են և օգնում են ձեր երեխային անվտանգ և առողջ պահել, հատկապես վերաբերվում է մինչև երկու տարեկան երեխաներին:
   - Պատվաստումները երեխաներին պաշտպանում են այնպիսի լուրջ և վնասակար հիվանդություններից, ինչպիսիք են՝ կարմրուկը, խոզուկը, պերտուսիսը (կապույտ հազ) և գրիպը:
   - Եթե ձեր երեխան չի ստացել իր պատվաստումները, հնարավորինս շուտ այցելեք բուժաշխատողի՝ անհրաժեշտ պատվաստումները ստանալու համար:
   - Երեխաներին անհրաժեշտ պատվաստումների ցանկի համար, այցելեք՝ www.cdc.gov/vaccines/schedules/index.html.

2. Ի՞նչ անել, եթե ես մտահոգված եմ՝ իմ երեխային համավարակի ժամանակ պատվաստում ստանալու այցի վերաբերյալ:

   - Սա նորմալ անհանգստություն է: Առողջապահական գրասենյակները, ներառյալ՝ կլինիկաները և դեղատները, քայլեր են ձեռնարկում ՝ ապահովելու ձեր անվտանգ այցելությունը:
   - Զանգահարեք այցելելուց առաջ և հարցրեք, թե ինչպես են նրանք այցելուներին անվտանգ պահում և այն քայլերի վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են, որ ձեռնարկեք:
   - Բժշկի գրասենյակ, կլինիկա կամ դեղատուն մտնող յուրաքանչյուր ոք պետք է դեմքի ծածկոց կրի, բացառությամբ՝ 2 տարեկանից փոքր երեխաների, բոլոր նրանց, ովքեր շնչառական խնդիրներ ունեն կամ այն մարդկանց, ովքեր ինքնուրույն չեն կարող հանել դեմքի ծածկոցը: Նրանք, ովքեր իրենց բուժաշխատողի կողմից ծածկոց չկրելու ցուցում են ստացել, նույնպես ազատված են այս պահանջից: 2-8 տարեկան երեխաները պետք է դիմակ կրեն միայն չափահասների հսկողության ներքո:

3. Ու՞ր կարող եմ իմ երեխային տանել՝ պատվաստում ստանալու համար:

   - ՑԱԾՐ ԳՆԵՐՈՎ կամ ԱՆՎՃԱՐ պատվաստումների ծառայությունների ցանկի համար, այցելեք ՀԱՎ վեբկայք՝publichealth.lacounty.gov/ip/clinics.htm.
   - Դուք կարող եք նաև զանգահարել Լոս Անջելես Շրջանի Տեղեկատվական գիծ 2-1-1 հեռախոսահամարով կամ այցելել Պատվաստումներ Գտնելու վեբ կայք՝ vaccinefinder.org.



4. Կա՞ արդյոք որևէ պատվաստում, որը կարող է իմ երեխային և ընտանիքս պաշտպանել COVID-19- ից:

   Ոչ, բայց սահմանված պատվաստումները ստանալը, ինչպիսիք են՝ գրիպի պատվաստանյութը, կարմրուկի կամ կապույտ հազի դեմ պատվաստանյութը, կարող են օգնել ձեր երեխային պաշտպանել այլ հիվանդություններից:

CDCP-IP-0025-01 (6/23/20)